ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

ԼՈՒՍԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ

2020-2024 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

Մշակվել է՝ համայնքի ղեկավարին կից գործող ՀԶՀԾ-ի և տարեկան բյուջեի կառավարման գծով խորհրդակցական մարմնի կողմից՝

Ներկայացվել է՝ համայնքի ղեկավար Արամայիս Հակոբյանի կողմից

Հաստատվել է՝ համայնքի ավագանու 18.02.2020 թ.թիվ 3-Ն որոշմամբ

(նիստի ամսաթիվը)

ԼՈՒՍԱՂԲՅՈՒՐ 2020

Scanned by CamScanner

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք.....3

2. Համայնքի իրավիճակի գնահատում.....4

2.1Համայնքի ընդհանուր նկարագրությունը.....4
2.2Համայնքի սոցիալ տնտեսական վիճակը.....5

2.3Համայնքում իրականացվող ծրագրերը.....6

2.4Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումներ.....7
2.5Զարգացման խոչնդոտներ և դժվարություններ.....8

2.6Համայնքի ուժեղ և թույլ կողմերի (ՈՒԹՍ) վերլուծություն.....9

3. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում.....4
3.1Համայնքի զարգացման տեսլական.....10

3.2Համայնքի զարգացման անմիջական նպատակներ.....12

4. ՀԶԾ ֆինանսավորում.....22

Scanned by CamScanner

1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք

Հարգելի համագյուղացիներ

Ձեզ եմ ներկայացնում Լուսաղբյուր համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը, համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման ֆինանսական, տնտեսական, բնական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջությունն արտահայտող փաստաթուղթ է, որը ենթադրում է համայնքի հիմնախնդիրների արդյունավետ լուծում և համայնքի տեսլականի իրականացում:

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լուսաղբյուր համայնքի 2017-2021թթ. զարգացման ծրագրի ընդունման նպատակն է սահմանել համայնքի տեսլականը 2021 թվականին, այդ տեսլականին հասնելու ռազմավարությունը և հիմնական նպատակները:Համայնքի զարգացման հնգամյա ծրագիրը մշակելիս հաշվի են առնվել համայնքի առկա ռեսուրսները (ակտիվները), պարտավորությունները, տեղական առանձնահատկությունները, երկրի տնտեսական և քաղաքական առկա իրավիճակը, ինչպես նաև առաջիկա զարգացումների կանխատեսումները: Զարգացման ռազմավարության և գերակայությունների սահմանման ժամանակ ցուցաբերվել է ինտեգրացված մոտեցում (տնտեսական, սոցիալական, շրջակա միջավայրի և այլ գործոններ):

Համայնքի զարգացման հնգամյա ծրագիրն իր մեջ ներառում է՝ համայնքի իրավիճակի բնութագիրը, վերլուծությունը և գնահատումը, համայնքի տեսլականը, ռազմավարության և ՀԶՀԾ-ի հիմնական նպատակների սահմանումը, նախատեսվող հանրապետական և մարզային, միջհամայնքային համագործակցության և այլ ծրագրերը, գույքի կառավարման ծրագիրը, զարգացման ծրագրի մոնիթորինգը:

Համայնքի հիմանական պրոբլոմներն են՝

1.Համայնքի բնակչության մի մասը գտնվում են սոցիալապես վատ պայմաններում,

2.հաճախակի են լինում երաշտի տարիներ, որից գյուղացիները կորցնում են բերքի 50 %-ը,

3.գործազրկության պատճառով երիտասարդները մեկնում են արտագնա աշխատանքների,

4.կենցաղային աղբահեռացում չի կատարվում,

5.համայնքում չկա եկեղեցի, մշակույթի տուն և համայնքապետարան,

6.բնակչության 30%-ը բնակվում են վագոն-տնակներում՝ սոցիալապես վատ պայմաններում:

Ծրագրի մշակմանը մասնակցել են համայնքապետարանի աշխատակազմը,համայնքի ավագանին և համայնքի ազգաբնակչության ակտիվը: Քննարկվել ու հաշվի են առնվել հանրային լսումների արդյունքում կատարված բոլոր առաջարկությունները: Ծրագիրը հաստատվել է համայնքի ավագանու անդամների կողմից:

Scanned by CamScanner

2. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

2.1 Համայնքի ընդհանուր նկարագրություն

Լուսաղբյուր (Ալբուլաղ) գյուղը վերաբնակեցվել է 1804թ.-ից հետո: Համայնքի բնակիչները ներգաղթել են հիմնականում Բասենի և Կարսի տարբեր գյուղերից: Գյուղը գտնվում է ծովի մակերևույթից 1600-1850մ բարձրության վրա, համարվում է բարձր լեռնային գոտի, գոտիավորման աստիճանը հանդիսանում է 15-րդ գոտի:: Գյուղը գտնվում է Փամբակի հովտի արևմտյան ծայրամասում, Մարալ-Դաղ լեռան ստորոտին: Մարալ-Դաղից բխում են բազմաթիվ աղբյուրներ, որոնցից դեպի արևելք հոսող ջրերը լցվում են Քուռ գետը,իսկ դեպի արևմուտք հոսող ջրերը լցվում են Արաքս գետը: Գյուղը գտնվում է Վանաձոր - Գյումրի մայրուղու վրա: Մարզկենտրոնից 45 կմ դեպի արևմուտք , Սպիտակ քաղաքից 25 կմ դեպի արևմուտք: Այս գյուղով են անցնում Թբիլիսի - Գյումրի երկաթուղին և ավտոճանապարհը: Շրջապատված է սարերով, որի լանջերից բխող բնական ազբյուրներից հոսում է համայնքի խմելու ջուրը, որը մատակարարում է բնակիչության 60-70 %-ին:

Գյուղի կլիման ձմռանը ցրտաշունչ է, ամռանը՝ զով, ամռանը գյուղում հաճախակի են չորային և երաշտի տարիները:

Գյուղի բնակչությունը կազմում է 1174 մարդ, այդ թվում

- տղամարդիկ 590
- կանայք 584
- ժամանակավոր բացակայողներ 31
- առանց հաշվառման բնակիչներ 36
- Ծխերի թիվը 298
- երեխաներ (0 – 7տ) 157
- դպրոցական(7 – 17) տ 147
- 18 – 62 տարեկան 774
- թոշակառուներ 96
- հաշմանդամներ 29
- «Փարոս» համակարգում հաշվառված ընտանիքներ 96

- Արցախյան պատերազմի մասնակիցներ 1
- Գրանցված գործազուրկներ 35

Scanned by CamScanner

2.2. Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը

Համայնքի տարեկան բյուջեն կազմում է 17.168.4 հազ. դրամ:

Ընդհանուր եկամուտների մեջ համայնքի սեփական եկամուտների բաժինը կազմում է 2100000 հազ. դրամ (12%)

- Աղուսյակում բերված են համայնքի հիմնական գյուղատնտեսական արտադրանքը և ծավալները 2016թ.

Գյուղատնտեսական ապրանքի տեսակը	Ցանքատարածության չափը	Արտադրանքի քանակը
Կարտոֆիլ	120 հա	24000g
Կաղամբ	8 հա	42000
Բանջարեղեն	7 հա	125g
միս		25տ
ձու		35 հազ. հատ
բուրդ		250կգ
մեղր		8 տ

Անասունների տեսակը	Գլխաքանակը
Խոշոր եղջերավոր անասուններ	463
Այդ թվում կովեր	280
Ոչխարներ	126
Այծեր	13
Ավանակներ	1
Թռչուններ	796
Մեղվաընտանիքներ	467

- Ընդհանուր միջնակարգ կրթությունն իրականացվում է համայնքի տարածքում գործող միջնակարգ դպրոցում որը կառուցվել է 2000թ-ին և որը կարիք ունի վերանորոգման, ունի 120 աշակերտ, Դպրոցն ունի 30 աշխատատեղ, որից 24-ը ուսուցիչ,, մեկ ուսուցչին բաժին է ընկնում մոտ 5 աշակերտ: Վերջին տարիներին պակասել է աշակերտների թիվը, որը պայմանավորված է բնակչության արտագաղթով:

Scanned by CamScanner

Մշակույթի բնագավառում գործում է միայն գրադարան 1 մեկ աշխատողով, համալրված 677 անուն գրքով, որը տեղակայված է վագոն տնակում :
-Դպրոցի մասնաշենքում գործում է նաև նախակրթարան, ուր հաճախում են 24 երեխա: Նախակրթարանն ունի 1 աշխատող:
- Ընտանեկան նպաստների համակարգում գրանցված են 96 ընտանիքներ,
- Համայնքում գործազրկության մակարդակը կազմում է 70%:

- Առողջապահության համակարգում գործում է բուժ կետ, բուժաշխատողի թիվը _1 բուժքույր որը սպասարկում է 1174 մարդ, հիմնական սպասարկումը կատարվում է հարակից գյուղում և Սպիտակ քաղաքում, որը իրենից մեծ դժվարություն է ներկայացնում բնակչության նյութապես վատ պայմաններում գտնվելու պատճառով: Բուժ կետը տեղակայված է վագոն տնակում, որը կարիք ունի վերանորոգման: Այդ իսկ պատճառով բուժսպասարկումը դեռևս գտնվում է ցածր մակարդակի վրա:

2.3. Համայնքում իրականացվող ծրագրերը

- Համայնքում գալիք հինգ տարիների ընթացքում նախատեսվում է կատարել գյուղատնտեսության զարգացում, որի հիմնական նպատակն է բարձրացնել գյուղատնտեսության հողերի բերքատվությունը, ավելացնել գյուղ մթերքների արտադրությունը, հատկապես ցորենի, հացահատիկի բերքատվությունը, 1 հա-ի հաշվով հասցնել 35.0-40.0g, կարտոֆիլը 200g:
- Համայնքի գյուղամիջյան և դաշտամիջյան ճանապարհների բարեկարգում, ասվալտապատում՝ համայնքում ապահովել ճանապարհների հարմար վիճակ, բոլոր տեսակի տրանսպորտի համար վերացնել բոլոր տեսակի ջրափոսերը: Դաշտամիջյան բոլոր ճանապարհները դարձնել անցանելի՝ բոլոր տեսակի ավտոտրանսպորտի և գյուղտեխնիկայի համար:
- Համայնքի խմելու ջրի հոսքագծերի նորոգում և ընդլայում: Ապահովել համայնքի բնակչությանը շուրջօրյա խմելու ջուր:
- Համայնքում ոռոգման ցանցի բարելավում, ոռոգման ցանցի վերանորոգում, որը կնպաստի ջրովի վարելահողերի մշակմանը, ջրովի մշակաբույսերի ավելացմամբ:
- Ոռոգման ներքին ցանցի կառուցում՝ ջրի կորստի պակասում, որը կբարելավվի տնամերձների լրիվ ջրով ապահովում:
- Ցերեկային լույսերի ընդլայնում, ֆոտովոլտային կայանների տեղադրու, որը կբարձրացնի համայնքի բնակիչների կենսամակարդակը և կխնայի էլեկտրաէներգիան:
- Բնակչության սոցիալ-տնտեսական պայմանների բարելավում՝ աջակցել միջնակարգ դպրոցին և թեթևացնել բնակչության հոգսերը:
- Համայնքում մշակույթի տան ստեղծում, որը կնպաստի երիտասարդների մշակութային կյանքի աշխուժացմանը,
- Համայնքապետարանի շենքի կառուցում:
- Մանկապարտեզի շենքի կառուցում:
- Համայնքի ֆուդբոլի դաշտի վերանորոգում և գույքի ապահովում՝ երիտասարդ պատանիների սպորտային պայմանների ստեղծում և սպորտին աջակցում:

Scanned by CamScanner

2.4 Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները

	Եկամուտի տեսակը	2020թ նախա-տեսված	2021թ կանխա-տեսում	2022թ կանխա-տեսում	2023 Կանխա-տեսում	2024 Կանխա-տեսում
	ԵԿԱՄՈՒՏՆԵՐ ԸՆԴԱՄԵՆԸ	17806.7	18877.3	18805.8	18840.8	18850.9
Ա	Հարկային եկամուտներ	4102.0	4111.0	4131.0	4136.0	4156.0
1.	Հողի հարկ	3336.0	3336.0	3336.0	3336.0	3336.0
2.	Գույքահարկ	766.0	775.0	795.0	800.0	820.0
3.	Եկամտահարկ	-	-	-	-	-
4.	Այլ հարկ. եկամուտներ	-	-	-	-	-
Բ	Տուրքեր	78	78	78	78	78
1.	Պետական տուրքեր	-	-	-	-	-
2.	Տեղական տուրքեր	78	78	78	78	78
Գ	Ոչ հարկ. եկամուտներ	571.4	608.7	637.0	637.3	638.6
1.	Համայնքի սեփ. հանդիսացող վարձակալ. հողեր	433.0	433.5	440.2	440.2	440.2
2.	Գույքի վարձավճարներ	-	-	-	-	-
3.	Տեղական վճարներ	52.5	52.0	53.0	53.0	54.0
4	Եկամուտներ կապ. գործ.	-	-	-	-	-
5	Գույքի օտարումից ստացված եկամուտներ	1245.7	1250.4	1255.6	1255.6	1255.6
Դ	Պաշտոնական տրանսֆերտներ, դոտացիա	12000.0	12100.0	12500.0	13500.0	14500.0
Ե	Սուբվենցիա	--	_	_	-	-
Զ	Տարեսկզբի ազատ մնացորդ	_	_	_	-	-

Scanned by CamScanner

2.5. Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ

Լուսաղբյուր համայնքի առջև ծառացած ընդհանուր հիմնական խնդիրներն են՝

Համայնքի բնակչության 70% -ը գտնվում են սոցիալապես վատ պայմաններում: Համայնքի զարգացման հիմնական խոչընդոտող գործոններն ու դժվարությունները նշված են ստորև.

1) Նախադպրոցական կրթության կազմակերպման խոչընդոտ է հանդիսանում համայնքում նախադպրոցական շենքի՝ մանկապարտեզի բացակայությունը:
2) Համայնքում մշակույթի տան բացակայությունը իր բացասական ազդեցություն է թողել համայնքի երիտասարդների մշակութային կյանքի ակտիվության վրա:
3) Համայնքի բնակչության սոցիալական պաշտպանությանը խոչընդոտող գործոններ են՝
   - գործազրկությունը
   - ծայրամասային թաղամասերի գազաֆիկացման բացակայությունը
   - խմելու ջրի անհավասարաչափ բաշխումը
4) Ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսմանը խոչընդոտող գործոններն են՝
   - սպորտհրապարակ, մարզադահլիճ և մարզագույք չունենալը,
5) Համայնքում բնակարանային շինարարության խթանմանը խոչընդոտող գործոններն են՝
   - համայնքաբնակների աղքատությունը,
6) Համայնքի աղբահանությանը և սանիտարական մաքրմանը խոչընդոտող գործոններն են՝
   - աղբամանների և աղբատար մեքենաների բացակայությունը,
7) Համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքի կազմակերպմանը, համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանմանը և շահագործմանը խոչընդոտող գործոններն են՝
   - միջհամայնքային, ներհամայնքային և դաշտամիջյան ճանապարհների քայքայված վիճակը,
   - կանգառների բացակայությունը,
   - ճանապարհային նշանների բացակայությունը
8) Աղետների ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացմանը խոչընդոտող գործոններն են՝
   - քաղաքացիական պաշտպանության գիտելիքների պակասը,
   - սեյսմիկ գոտում գտնվելը,
   - աղետներին պատրաստվածության ծրագրերի բացակայությունը,
   - համայնքաբնակները պատրաստ չեն համապատասխան քայլերի դիմել վերահաս և փաստացի վտանգի դեպքում,
9) Գյուղատնտեսության զարգացման խթանմանը խոչընդոտող գործոններն են՝
   - որակյալ սերմի պակասը,
   - սպառման շուկայի դժվար հասանելիությունը,
10) Համայնքում շրջակա միջավայրի պահպանությանը խոչընդոտող գործոններն են՝
   - հեղեղատարների բացակայությունը,
   - աղբահեռացման չկազմակերպելը,

Scanned by CamScanner

11) Համայնքի երիտասարդության խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի և միջոցառումների կազմակերպմանը խոչընդոտող գործոններն են՝
   - գործարար միջավայրի բացակայությունը,
   - ձեռնարկությունների բացակայությունը,
   - երիտասարդների միգրացիան,
12) Համայնքում ծնելիության և բազմազավակության խթանմանը խոչընդոտող գործոններն են՝
   - երիտասարդների չամուսնանալը,
   - երիտասարդ ընտանիքների սոցիալապես պաշտպանված չլինելը,
   - պետության կողմից աջակցության պակասը, աղքատությունը:

2.5 ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՊՐՈԲԼԵՄՆԵՐԸ ԾՆՈՂ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Գյուղացիները գտնվում են սոցիալապես վատ պայմաններում, քանի որ՝

ա/ հաճախակի են լինում երաշտի տարիներ, որից գյուղացիները կորցնում են բերքի 50-ից 70 %-ը,

բ/ հնարավորություն չունեն որակյալ սերմեր և վառելանյութ ձեռքբերելու,

գ/ գյուղացին համայնքի պրոբլեմները իր սեփականը չի համարում,

դ/ գյուղացին չի կարողանում իրացնել իր արտադրանքը,

ե/ գյուղացին չի կարողանում կատարել իր հարկային պարտավորությունները,

զ/ գործազրկության պատճառով երիտասարդները մեկնում են արտագնա աշխատանքների:

2.6. Համայնքի ուժեղ և թույլ կողմերը, (ՈՒԹՀՍ)

ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ

- Աշխատուժի առկայությունը
- Աշխարհագրական դիրքը՝ միջազգային նշանակության կենտրոնական ճանապարհ, երկաթուղի,
- Հողային և ջրային ռեսուրսների բավարար առկայություն
- Գյուղատնտեսության համար անհրաժեշտ մասնագետ կադրերի առկայությունը
- Դպրոցը ապահովված է առաջնակարգ մասնագետներով:

ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

- Անմխիթար վիճակում են գտնվում խմելու ջրի, ոռոգման ջրի ցանցերը
- Ճրատարների և գյուղամիջյան ու դաշտային ճանապարհների անմխիթար վիճակը
- Բնակարանային շինարարությունը կանգնած է, կան կիսակառույց բնակարաններ

Scanned by CamScanner

- Մեծանում է արտագնա աշխատանքի մեկնողների թիվը.
- Գործազրկություն.
- Հողերի անջրդիության պատճառով գյուղացու եկամուտների նվազում.
- Սոցիալապես ապահով ընտանիքների սակավություն
- Աղետի գոտի հասկացողություն իր ամբողջ հետևանքներով
- Համայնքում գյուղ տեխնիկայի բացակայություն:

3.Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում

3.1. Համայնքի զարգացման տեսլական

Համայնքի զարգացման տեսլականն է՝

Ունենալ զարգացած և հզոր համայնք, որտեղ մարդիկ ապրում են արժանապատիվ կյանքով:

- Համայնքի ուժեղ կողմերի հնարավորությունների վրա հիմնված վեր հանել համայնքի խնդիրները, և խոչընդոտները հաղթահարելով՝ ապահովել կայուն, շարունակական զարգացում ու հզորացում:
- Հետևողականորեն բարեփոխումներ կատարելու միջոցով բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական, մշակութային և հանգստի պայմանները, համայնքը դարձնել ավելի գեղեցիկ, զարգացած և բարեկարգ:
- Բարեփոխումներ կատարելով նախատեսվում է հասնել հետևյալ նպատակներին
- Զարգացնել գյուղատնտեսությունը,
- Ավելացնել գյուղատնտեսական արտադրանքը,
- Ավելացնել բնակչության ֆոնդը,
- Պակասեցնել արտագաղթը,
- Ակտիվացնել բնակչության մշակութային կյանքը,
- Բարելավել տրանսպորտային սպասարկումը,
- Բարեկարգել փողոցները,
- Համայնքում կազմակերպել աղբահանություն և սանիտարահիգենիկ պայմաններ ստեղծել,
- Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների թիվը նվազեցնել,
- Համայնքի սեփական տարեկան եկամուտները հասցնել 30 %-ով աճի,
- Կանխարգելել արտակարգ իրավիճակները:

3.2. Համայնքի զարգացման անմիջական նպատակներ

1) Ակտիվ մշակութային և մարզական կյանքն ակտիվացնել՝ երիտասարդության ներգրավմամբ:
2) Բարելավել համայնքի բնակչության սոցիալական պաշտպանությունը:
3) Ապահովել ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսմանը:
4) Համայնքում բնակարանային շինարարությունը խթանել:
5) Ապահովել համայնքի բնակավայրեերի կառուցապատումը, բարեկարգումը և կանաչապատումը: Կազմակերպել համայնքի աղբահանությունը և սանիտարական մաքրումը: Կոմունալ տնտեսության աշխատանքներն ապահովել, ինչպես նաև

Scanned by CamScanner

համայնքային գերեզմանատան պահպանումը և գործունեության ապահովումը կազմակերպել,

6) Համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքը կազմակերպել, համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանումը և շահագործումը կազմակերպել:
7) Աջակցել պետության պաշտպանության հարցում:
8) Խթանել գյուղատնտեսության զարգացմանը:
9) Կազմակերպել համայնքում շրջակա միջավայրի պահպանություն:
10) Իրականացնել աղետների ռիսկի նվազեցման միջոցառումներ:
11) Երիտասարդության խնդիրների լուծման ուղղված ծրագրեր և միջոցառումներ կազմակերպել:
12) Համայնքում խթանել ծնելությանը:
13) Խթանել համայնքային հասարակական կյանքին հաշմանդամների մասնակցությանը:
14) Բարեգործությունը խթանել՝ համայնքում մշակութային, կրթական, գիտական, առողջապահական, մարզական, սոցիալական և այլ հաստատությունների հիմնադրման, ֆինանսավորման, ինչպես նաև դրանց ֆինանսական անկախության ապահովման նպատակով:

Scanned by CamScanner

ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԾՐԱԳՐԵՐԻ ԿՈՆԿՐԵՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ, ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԽՆԴԻՐՆԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄԸ ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ

ԾՐԱԳԻՐ 1

ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ ԵՎ ՋՐԱՀԵՌԱՑՈՒՄ

<<Զույգ աղբյուր>> կոչվող աղբյուրի ջրերը միացումը <<Դուրգարի աղբյուր>> գործող ցանցին:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ծրագրի հիմնական նպատակն է

Համայնքի բնակչությանը ապահովել շուրջօրյա ջրամատակարարումով:

Ծրագրի իրագործման համար անհրաժեշտ է լուծել մի շարք կարևոր խնդիրներ

- համագործակցելով Լոռու մարզպետի և Հայաստանում գործող սոցիալական և ֆինանսական կազմակերպությունների հետ՝ կազմելով ծրագրի իրականացման նախագծա-նախահաշվային փաստաթղթերը,
- ապահովել համայնքային ներդրումը,
- ձեռք բերել ծրագրի իրականացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցներ,

ԾՐԱԳՐԻՑ ՍՊԱՍՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Իրականացնելով այս ծրագիրը, գյուղը 80%-ով կապահովվի խմելու ջրով: Կբարելավվի գյուղի ազգաբնակչության սոցիալ-տնտեսական վիճակը:

ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Աշխատանքները իրականացնելու համար անհշաժեշտ է՝

1. 800մ. խողովակ 100մմ,
2. Մուտքի ելքի փական 2 հատ 100 մմ խողովակի համար,
3. 800մ խրամուղի փորման աշխատանքներ
4. 50 տ. Տարողությամբ օրվա կարգավորիչ ջրամբար:

Ընդհանուր ծրագրի բյուջեն մոտավոր հաշվարկներով կկազմի 20.000.000 ՀՀ դրամ:

Scanned by CamScanner

ԾՐԱԳԻՐ 2

ՀԱՄԱՅՆՔԻ ՈՌԱԳՄԱՆ ՆԵՐՔԻՆ ՑԱՆՑԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ

Ծրագրի հիմնական նպատակն է՝

- ապահովել համայնքի ջրամբարից ներքև գտնվող սեփականաշնորհված 200հա. հողամասերի անխափան ոռոգումը,
- բարձրացնել գյուղ. նշանակության հողերի բերքատվությունը, ավելացնել գյուղ-մթերքների արտադրությունը, մասնավորապես՝ կարտոֆիլի, կաղամբի և բանջարաբոստանային կուլտուրաների:

Ծրագրի իրագործման համար անհրաժեշտ է լուծել մի շարք կարևոր խնդիրներ

- հիմնախնդիրը բարձրացնել ՀՀ կառավարության առջև՝ ծրագիրը ֆինանսավորելու և իրագործելու համար,
- ապահովել համայնքի կողմից պահանջվող ներդրումը,
- կազմել ծրագրի նախագծա-նախահաշվային փաստաթղթերը,
- Ներքին ոռոգման ցանցը և ջրամբարը հանձնել շահագործման, համայնքի գյուղ. տնտեսություններին մատակարարել մշտական ոռոգման ջուր:

ԾՐԱԳՐԻՑ ՍՊԱՍՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

- Իրականացնելով այս ծրագիրը, համայնքի 200 հա սեփականաշնորհված հողերը կապահովվեն ոռոգման ջրով:

Scanned by CamScanner

ԾՐԱԳԻՐ 3

ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵԼԱՎԱՊԱՏ ԱՌՈՒՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ

Համայնքի սելավապատ առուների կառուցում:Երկար ժամանակ սելավատար առուների չմաքրվելու հետևանքով. տեղացած անձրևներից առաջացած ջրհեղեղը լցվում է բնակիչների բնակարանները և ամբողջությամբ հեղեղում է նրանց տնամերձ հողատարածքները: Հաշվի առնելով, որ գարնան ձնհալն ու անձրևները կարող են արդեն իսկ թափանցել և վնասել նշված տարածքները, այդ իսկ պատճառով, ընդառաջելով և հաշվի առնելով բնակչության խնդրանքը, անհապաղ իրականացնել սելավապատ առուների պատնեշների կառուցումը:

Ծրագրի հիմնական նպատակն է

- Ապահովել բնակչության անվտանգությունը՝ առաջացած ջրհեղեղից պաշտպանելու համար,
- հետագա աղետներից պաշտպանել գյուղատնտեսական նշանակության հողատարածքները,ոռոգման ջրատարները,ինչպես նաև մի շարք շենքեր և շինություններ:

Ծրագրի իրագործման համար անհրաժեշտ է լուծել մի շարք կարևոր խնդիրներ

- Համայնքի առաջնահերթ հիմնախնդիրներից մեկը լուծելու համար հարց բարձրացնել Լոռու մարզպետի, Հայաստանում գործող մի շարք հասարակական և ֆինանսական կազմակերպությունների առաջ ծրագիրը ֆինանսավորելու և իրագործելու համար,
- ապահովել համայնքի կողմից պահանջվող ներդրումը,
- կազմել ծրագրի նախագծա-նախահաշվային փաստաթղթերը,

ԾՐԱԳՐԻՑ ՍՊԱՍՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

- Կասեցնել հետագա աղետները,որի վնասները նախկինում կազմել են շուրջ 5 միլիոն դրամ,
- իրականացնել այս ծրագիրը՝ ափամերձ 40հա տարածքներ պաշտպանելով հետագա հեղեղումներից և բարձրացնել հողերի նորմալ մշակումն ու բերրիությունը:

Scanned by CamScanner

ԾՐԱԳԻՐ 4
ՀԱՄԱՅՆՔԻ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՆՈՐՈԳՈՒՄ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ

Զրհեղեղի հետևանքներից վնասվել էր համայնքի գյուղամիջյան և դաշտային 2.2 կմ երկարությամբ ճանապարհ: Հատկապես անհրաժեշտություն է առաջանում առաջնահերթ նորոգել դաշտամիջյան ճանապարհները՝ ստեղծելով հնարավոր պայմաններ գյուղատնտեսական աշխատանքները դաշտերում իրականացնելու համար:

<u>Ծրագրի հիմնական նպատակն է</u>

- ապահովել տրանսպորտային բոլոր միջոցների անխափան երթևեկություն տարվա բոլոր եղանակներին,
- վերացնել փողոցների ջրափոսերը և ճանապարհներին վտանգ սպառնացող հատվածները: 2.2 կմ միջհամայնքային ճանապարհը ասֆալտապատել:

<u>Ծրագրի իրագործման համար անհրաժեշտ է լուծել մի շարք կարևոր խնդիրներ</u>

- համագործակցելով Լոռու մարզպետի և Հայաստանում գործող սոցիալական և ֆինանսական կազմակերպությունների հետ՝ կազմելով ծրագրի իրականացման նախագծա-նախահաշվային փաստաթղթերը,
- ապահովել համայնքային ներդրումը:

Scanned by CamScanner

ԾՐԱԳԻՐ 5
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ

Համայնքում համայնքային կենտրոն չլինելու պատճառով համայնքում անկում է ապրում մշակութային և սպորտային կյանքը: Համայնքում կան բազմաթիվ շնորհալի երիտասարդներ որոնք նորմալ պայմանների բացակայության պատճառով չեն կարողանում զարգացնել իրենց բնատուր ունակությունները:

<u>Ծրագրի հիմնական նպատակն է</u>

- Համայնքում զարգացնել գիտական, մշակութային և սպորտային կյանքը
- Վերացնել երիտասարդության մոտ անգործությունից առաջացող բոլոր վատ երևույթները
- մշակույթի տան դահլիճը տրամադրել հարսանյաց արարողությունների, ավագանու նիստերի,համայնքի ընդհանուր ժողովների անցկացման համար,
- տրամադրել խաղասենյակներ շախմատի, նարդու և այլ խաղերի համար

<u>Ծրագրի իրագործման համար անհրաժեշտ է լուծել մի շարք կարևոր խնդիրներ</u>

- համագործակցելով Լոռու մարզպետի և Հայաստանում գործող սոցիալական և ֆինանսական կազմակերպությունների հետ՝ կազմելով ծրագրի իրականացման նախագծա-նախահաշվային փաստաթղթերը,

ապահովել համայնքային ներդրումը,

Scanned by CamScanner

ԾՐԱԳԻՐ 6

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԿԱՅԱՆԻ ՍՏԵՂԾՈՒՄ

Համայնքում գյուղ տեխնիկա չլինելու պատճառով համայնքի վարելահողերի մեծ մասը չի հերկվում աստիճանաբար վերածվում է խոտհարկի և խոպան հողերի ,որը բերում է գյուղատնտեսության անկման:Հիմնականում օգտվում են հարևան գյուղերի գյուղ տեխնիկայից

<u>Ծրագրի հիմնական նպատակն է</u>

-Համայնքում ստեղծել գյուղ. տեխնիկայի կայան
-Զարգացնել գյուղատնտեսությունը և անասնապահությունը

-Ապահովել ցանքսի և բերքահավաքի ժամանակին կազմակերպումը

-Նպատակային և լիակատար օգտագործել սեփականաշնորհված հողերը

- ճիշտ կազմակերպել ցանքաշրջանառությունը

<u>Ծրագրի իրագործման համար անհրաժեշտ է լուծել մի շարք կարևոր խնդիրներ</u>

- համագործակցելով Լոռու մարզպետի և Հայաստանում գործող սոցիալական և ֆինանսական կազմակերպությունների հետ՝ կազմելով ծրագրի իրականացման նախագծա-նախահաշվային փաստաթղթերը,
- ապահովել համայնքային ներդրումը,

Scanned by CamScanner

ԾՐԱԳԻՐ 7

ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՐԵՎԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆՆԵՐՈՎ ՄՆՎՈՂ ԳԻՇԵՐԱՅԻՆ ԼՈՒԵՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԱՆՑԿԱՑՆՈՒՄ

Ծրագրի հիմնական նպատակն է

Ծրագրի իրականացման արդյունքում կնվազի համայնքի բյուջեի ծախսերը, որի արդյունքում խնայած միջոցները կտրամադրվեն գյուղամիջյան և դաշտամիջյան ճանապարհների բարեկարգմանը:

Ծրագրի իրագործման համար անհրաժեշտ է լուծել մի շարք կարևոր խնդիրներ

- համագործակցելով Լոռու մարզպետի և Հայաստանում գործող սոցիալական և ֆինանսական կազմակերպությունների հետ՝ կազմելով ծրագրի իրականացման նախագծա-նախահաշվային փաստաթղթերը,
- ապահովել համայնքային ներդրումը,

Scanned by CamScanner

ԾՐԱԳԻՐ 8

ԵԿԵՂԵՑՈՒ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Ծրագրի նպատակն ու խնդիրները

Ծրագրի հիմնական նպատակներ են՝

Հոգևոր դաստիարակության մակարդակի բարձրացման, որը կնպաստի համայնքում աղանդավորական խմբավորումներից զերծ պահելուն և հոգևոր մշակույթային արժեքների բարձրացմանը:

<u>Ծրագրի իրագործման համար անհրաժեշտ է լուծել մի շարք կարևոր խնդիրներ</u>

- համագործակցելով Լոռու մարզպետի, Հայ Առաքելական եկեղեցու և Հայաստանում գործող սոցիալական և ֆինանսական կազմակերպությունների հետ՝ կազմելով եկեղեցու վերակառուցման ճարտարապետահատակագծային փաստաթղթերի և նախագծա-նախահաշվային փաստաթղթերը,
- ապահովել համայնքային ներդրումը,

Scanned by CamScanner

ԾՐԱԳԻՐ 9
ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՇԵՆՔԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ

Համայնքում համայնքային մանկապարտեզի շենք չլինելու պատճառով անկում է ապրում համայնքի փոքրիկների կյանքը: Համայնքում կան 68 փոքրիկներ ովքեր չեն օգտվում մանկապարտեզ հաճախելու և նախնական կրթություն ստանալու իրենց իրավունքից:

Ծրագրի հիմնական նպատակն է

- Համայնքում զարգացնել մանուկների բնականոն կյանը, երեխաները կկարողանան շփվել իրենց հասակակից երեխաների հետ, կստանան նախնական կրթություն:

Ծրագրի իրագործման համար անհրաժեշտ է լուծել մի շարք կարևոր խնդիրներ

համագործակցելով Լոռու մարզպետարանի և Հայաստանում գործող սոցիալական և ֆինանսական կազմակերպությունների հետ՝ կազմելով ծրագրի իրականացման նախագծա-նախահաշվային փաստաթղթերը, ապահովել համայնքային ներդրումը,

Scanned by CamScanner

ԾՐԱԳԻՐ 10
ՀԱՄԱՅՆՔԻ ՖՈՒԴԲՈԼԻ ԴԱՇՏԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ

Համայնքը ունի ֆուդբոլի դաշտ որը անբարեկարգ է: Բարեկարգման և վերանորոգման աշխատանքներ կատարելու դեպքում համայնքը կունենա բարեկարգ ֆուդբոլի դաշտ: Ֆուդբոլի դաշտի առկայությունը հնարավորություն կտա համայնքի Լուսաղբյուր ֆուդբոլի խումբին և երիտասարդներին սպորտային կյանքը բարձրացնելու և զարգազնելու իրենց սպորտային ունակությունները:

<u>Ծրագրի հիմնական նպատակն է</u>

- Համայնքում զարգացնել սպորտը և մշակութային կյանքը
- Վերացնել երիտասարդության մոտ անգործությունից առաջացող բոլոր վատ երևույթները

<u>Ծրագրի իրագործման համար անհրաժեշտ է լուծել մի շարք կարևոր խնդիրներ</u>

համագործակցելով Լոռու մարզպետարանի և Հայաստանում գործող սոցիալական և ֆինանսական կազմակերպությունների հետ՝ կազմելով ծրագրի իրականացման նախագծա-նախահաշվային փաստաթղթերը, ապահովել համայնքային ներդրումը,

Scanned by CamScanner

4. ՀԶՀԾ ֆինանսավորում

ՀԶՀԾ-ում ընդգրկված ծրագրերը ֆինանսավորվելու են՝

- Համայնքի սեփական եկամուտներից,
- Ներքին պաշտոնական դրամաշնորհներից

ՀԶՀԾ-ում ընդգրկված ծրագրերի իրականացման համար չկան առկա միջոցներ, նրանց համար անհրաժեշտ է գումար ապահովել:

Scanned by CamScanner